Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարնե՛ր բոլոր յերկիրների — միացե՛ք.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1 Հոկտեմբեր 1923 թ. Յերևանում

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

361ч
2-24

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԴԵԿՐԵՏ

Հայաստանի Ոգնության Կոմիտեյի մասին

Ի նկատի ունենալով մի շարք հասարակական գործիչների խնդիրը հաստատել իրենց կազմած Հայաստանի Ոգնության Կոմիտեն, վորի նպատակն է՝ ոգնության հասնել Հայաստանի սովյալ ազգաբնակության յեվ իր այդ գործունեության ընթացքում նայեվ ոժանդակել յերկրի ընդհանուր շինարարության գործին՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշեց ներկայացված ստատուտը հաստատել յեվ թույլատրել Կոմիտեյին սկսել իր գործունեությունը հիշված նպատակի սահմաններում։

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահ՝ **Ա. Միյասնիկյան**
Քարտուղար՝ **Մ. Ղարաբեգյան**

Հայաստանի Ոգնության Կոմիտեյի Ստատուտը

Ա. ՆՊԱՏԱԿՆ ու ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

1. — *Հ. Ո. Կ-ի անմիջական նպատակն է ոգնության հասնել Հայաստանի սովյալ ազգաբնակության յեվ իր այդ գործունեության ընթացքում նայեվ ոժանդակել յերկրի ընդհանուր շինարարության գործին։*

2. — *Հոդ. 1-ում առաջադրյալ նպատակներին հասնելու համար կոմիտեն՝*

ա) Դանձում ու հավաքում է դրամական թե իրերով յեվ հատկապես մթերքներով նվիրատվություններ, ինչպես Հայաստանում, նույնպես յեվ արտասահմանում, առանձնապես արտասահմանյան հայ գաղութներում։

բ) Փոխադրում յեվ բաշխում է այս ամենը թե կառավարական յեվ թե իր մարմինների միջոցով։

գ) Դրավոր թե բանավոր պրոպագանդ է մղում (հրատարակություններով, հրապարակային ժողովներում յեվ այլն) այլեվ հատուկ նվիրակներ յեվ պատգամավորներ ուղարկելով արտասահման յեվ հարաբերություն պահպանելով արտասահմանի հասարակական այն որգանների հետ, վորոնք կարող են այդ նպատակի համար ոգտակար լինել։

13 DEC 2013

դ) Ընդհանրապես մեռք է առնում այն բոլոր որինական միջոցները, վորոնք անհրաժեշտ են համարվում ներկա ստատուտով նախատեսված նպատակներին հասնելու համար, առանձին ուշադրության առնելով հայ գաղութների աջակցությունը։

Բ. ՄԻՋՈՑՆԵՐԸ

3. — Հ. Ո. Կ-ի միջոցներն են կազմում՝

ա) Ընդհանրապես նվիրատվությունները յեվ մասնավորապես հայ գաղութներից ստանալիք դրամական թե իրերով յեվ թե մթերքներով ոգնությունը.

բ) Հրատարակություններից, հավաքույթներից յեվ այլ ստացած մասնակի մուտքերը։

Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

4. — Հ. Ո. Կ-ի կազմն է՝

ա) Ընդհանուր ժողով

բ) Նախագահություն յեվ

գ) Վերաստուգիչ հանձնաժողով.

5. — Նախագահությունը հանդիսանում է Կոմիտեյի բարձրագույն գործադիր մարմինը, վոր գործում է ներկա ստատուտի շրջանակներում յեվ ընդհանուր ժողովի վորոշումների յեվ հրահանգների համաձայն։

Դ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

6. — Հ. Ո. Կ-ն իր նպատակներով յեվ թե իր կազմակերպման սիստեմով, անկախ իր անդամների բաղաքական դավանանքից յեվ կուսակցական հանգամանքից հասարակական մարմին է, իրրեվ այդպիսին նա իրեն հայտարարում է չեզոք բաղաքական յեվ կուսակցական. պայքարի հանդեպ։

7. —Հ. Ո. Կ-ն յենթակա յե բացառապես ժողովների Խորհրդի հսկողության յեվ ազատ է առանձին ժողովների ինչպես նայեվ տեղական իշխանությունների իրավասությունից։

8. — Կոմիտեյի անդամները իրենց գործունեության միջոցին յեվ այդ գործունեության առթիվ կատարած հանցանքների համար պատասխանատու յեն անհատականորեն յեվ վոչ թե հավաքականորեն յեվ միաժամանակ ընդդատյա յեն միմիայն ժողովրդական դատարաններին։

9. — Հ. Ո. Կ-ն իրավաբանական անձն է յեվ ունի իր սեփական կնիքը։

10. — Կ-ի հասցեյով ուղղված դրամները, իրերը յեվ ընդհանրապես ամբողջ գույքը, ազատ են պետականացումից, բռնագրավումից յեվ այլ սահմանափակիչ որենքներից յեվ միաժամանակ ներքին թե արտաքին փոխադրությունների ընթացքում ոգտվում են պետական գույքերին վերապահված արտոնություններով։

11. — Կոմիտեն իր տրամադրության յենթակա դրամները, ընդհանրապես գույքը գործադրում է սույն ստատուտով նախատեսված նպատակների սահմաններում ըստ իր հայեցողության, իսկ իր նպատակներին համապատասխան հատուկ նվերները գործադրում է համաձայն նվիրատվի կամքին։

12. — Կոմիտեն իրավազոր է գրավոր թե բանավոր զեկուցումներ ներկայացնել, դիմումներ անել Ժողովների Խորհրդի Նախագահին յեվ առանձին ժողովներին յուր գործունեության հետ կապված յեվ նրանից բղխող հարցերի մասին. ստանալով նրանցից, ինչպես յեվ ընդհանրապես Խորհուրդային Իշխանության կենտրոնական թե տեղական մարմինների կողմից լայն աջակցություն։

13. — Կոմիտեյի կենտրոնն է Ցերեվան։

Հայաստանի Ոգնության Կոմիտե

1921 թիվ, Սեպտեմբեր
Ցերեվան.

Հայաստանի Ոգնության Կոմիտեյի յերրորդ համագումարի առթիվ

Հայաստանի Ոգնության Կենտրոնական Կոմիտեյի Գլխավոր Վարչությունը առաջիկա Հոկտեմբերի 1-ին հրավիրում է հերթական յերրորդ համագումարը։

Համագումարին հրավիրվում են ներկայացուցիչներ թե Հ. Ո. Կ-ի ճյուղերից, թե Խորհրդային Ֆեդերացիայի սահմաններում ու թե արտասահմանում գտնված բոլոր այն հասարակական կազմակերպություններից, վորոնք նպատակ ունեն մասնակից լինելու Հայաստանի շինարարության գործին։

Համագումարը տեվելու յե 7 որից վոչ ավել յեվ կզբաղվի հետեվյալ խնդիրների քննությամբ։

1. — Զեկուցում յեվ հաշվետվություն կենտրոնական վարչության։

2. Զեկուցում վերաստուգիչ հանձնաժողովի։

3. Զեկուցումներ տեղերից։

4. Ֆինանսական - տնտեսական խնդիրներ՝ I Շինարարական մնայուն ֆոնդ. II Դյուղատնտեսական - արդյունաբերական բանկ, III Հայաստանի վերաշինության խնդիրներ։

5. Կազմակերպչական խնդիրներ։

6. Ընտրություն Կենտրոնական Վարչության։

7. » Վերաստուգիչ Հանձնաժողովի։

8. *Ընթացիկ հարցեր։*

Համագումարին ներկա յեղող պատգամավորություններին իրավունք և վերապահվում, ըստ պահանջման հարկի, Կենտրոնական Վարչության համաձայնությամբ, ստատուտի սահմաններում նոր առաջարկներ մտցնել Համագումարի որակարգի մեջ։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԸ

Համագումարին մասնակցում են՝

1. ՀԱՅԱՍՏԱՆ

Հ. Ո. Կ-ի հիմնադիր անդամ ները, կենտրոն. Կոմիտեյի կազմը յեվ վերաստ. Հանձնաժողովը.

Հ. Ո. Կ-ի յենթակոմիտեները . . . . . 5 *ձայն*

Հ. Կարմիր Խաչի Գլխ. Վարչությունը . . . . . 1 »

2. ՎՐԱՍՏԱՆ

Հ. Ո. Կ-ի Կենտ. Կոմիտե. . . . . . 4 »

» *Յենթակոմիտեները* . . . . . 5 »

3. ԱԴՐԲԵՋԱՆ

Բագվի Կոմիտե . . . . . 2 »

4. ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մոսկվայի Կենտ. Կոմիտե . . . . . 4 »

» *Յենթակոմիտեներ (Տաշկենտ, Ռոստով, Խարկով, Կիյեվ, Ոդեսսա, Պետերբուրգ, Ստավրոպոլ, Կրասնոդար, Նովորոսսիյսկ., Ղրիմ, Խարբին, Հաշտարխան, Նիժնի-Նովգորոդ Արմավիր, Գրոզնի)* . . 15 »

5. ՏԱՃԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս, Հ. Ո. Կ-ի մարմիններ . . . . . 4 »

6. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թավրիզի Հ. Ո. Կ.2 ծ. Թեհրանի Հ. Ո. Կ. 1ծ. . . . . . 3 »

7. ՅԵԳԻՊՏՈՍ

Միյացյալ Բարեգ. Ընկ. . . . . . 2 »

8. ՖՐԱՆՍԻՑԱ

Փարիզ (Միյաց. Բարեգ. Ընկ. 2 ձայն,
Մարսել (Հ. Կար. Խաչ 1 ձայն) . . . . . 3 »

9. ԳԵՐՄԱՆՅԱ

Հ. Ո. Կ-ի Ցյուղ-Բերլին . . . . . 1 »

10. ԱՆԳԼԻՑԱ

Լոնդոն, Մանչեստր Հ. Բ. Մ. . . . . . 2 »

11. ԱՄԵՐԻԿԱ

Բոստոն, Նյու-Յորք, Ֆիլադելֆիյա — Հ. Սով.
Ոգն. Ամերիկ. Կենտ. Հանձնախումբ, Խորհուրդ. Հայաստանի Տեխնիկ. Ընկ. յեվ հայրենակցական միությունները . . . 5 *ձայն*

12. ՌՈՒՄԱՆԻՑԱ

Հ. Ո. Մ. Ներկայացուցչ. . . . . . 2 »

13. ԲՈՒԼՂԱՐԻՑԱ

Հ. Ո. Մ. » . . . . . 1 »

14. ՀՈՒՆԱՍՏԱՆ

Աթենք Հայ Ազգ. Միյութ. . . . . . 1 »

15. ՀՆԴԿԱՍՏԱՆ

Կալկաթա Հայ Ազգ. Միյութ. . . . . . 1 »

16. ՍՅՈՒՐԻՑԱ

Հալեպ Հայ Ազգ. Միյութ . . . . . 1 »

17. ՀԱԲԵՇՍՏԱՆ

Աբիս-Աբաբա Հայ Մ. . . . . . 1 »

18. ԱՎՍՏՐԻՑԱ

Հայ Գաղութային Միյութ. . . . . . 1 »

19. ՀԱՐ. ԱՄԵՐԻԿԱ

Բուենոս-Այրես Հայկ. Մ. . . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳ

Ա. Համագումարի անդամներ են համարվում Հայաստանի Օգնության Կոմիտեյի բոլոր մարմինների յեվ այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, վորոնք մուծված են շրջաբերական ցուցակի մեջ։

Բ. Հեռագրով յեվ նամակով ձայնի յեվ ներկայացուցչության իրավունք տալ Յերեվանում բնակվողներին՝ չի թույլատրվում։

Գ. Համագումարին մասնակցելու իրավունք ունեն այն ճյուղերն ու հասարակական կազմակերպությունները, վորոնք հաղորդակցության անկանոնության յեվ այլ պատճառով իրենց ուղարկված հրավերը չեն ստացել։

Դ. Բոլոր ներկայացուցիչներին խնդրվում ե համագումար գալ հետն ունենալով իրենց վայրերի գործունեության վերաբերյալ զեկուցումներ յեվ տեղեկագրեր։

Ե. Հ. Օ. Կ-ի կենտրոնական կամիտեներին յեվ մեծ քաղաքներում գտնված հասարակական կազմակերպություններին խնդրվում ե հարկ յեղած միջոցները կիրառել հարեվան համապատասխան հասարակական կազմակերպություններին իրազեկ դարձնելու Գ. համագումարի մասին յեվ ամեն կերպ ոժանդակելու՝ նրանց մասնակցությունը համագումարին ապահովելու համար։

Զ. Պատգամավորների ճանապարհածախսը Հ. Օ. Կոմիտեն իր վրա չի վերցնում։

Է. Բոլոր ճյուղերն ու հասարակական կազմակերպությունները պարտավոր են համագումարի շրջաբերականի ստացման մասին անմիջապես տեղեկացնել Կենտրոնական Վարչության, այլեվ համագումարից 15 որ առաջ տեղեկացնել համագումարին յեկող պատգամավորների թվի մասին։

Ը. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր ե ներկայացնել համապատասխան մանդատ։

ԿՈՉ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Առաջիկա նոյեմբերի 1-ին Յերեվանում, Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի մեջ տեղի կունենա Հայաստանի Օգնության Կոմիտեյի յերրորդ համագումարը։

Հայրենիքից դուրս գտնված, համայն աշխարհի հեռավոր յեվ մոտավոր վայրերում ցրված Հայության ժողովրդասեր ներկայացուցիչներին բացառիկ առիթ ե ներկայանում գալու Հայաստան, սեփական աչքերով տեսնելու ամրակուռ հիմքերը պետական-հասարակական այն շենքի վոր կառուցվում ե Խորհրդային Հայաստանի չքավոր աշխատավորության միյահամուռ, անդուլ ջանքերով յեվ կուռ քազուկներով։ Դալ հայրենիք, ականատես լինելու յեվ իրազեկ դառնալու տնտեսական-կուլտուրական այն նվաճումներին ու արժեքներին, վորոնք ամեն մի փոքր ժողովրդի ուրույն կյանքի՝ հիմնական կառուցվածքի անհրաժեշտ նախադրյալներն են կազմում։

Խորհրդային Հայաստանի համայն աշխատավորությունը արդեն թեվակոխել ե իր խաղաղ, շինարարական յեվ տնտեսական վերածնության յերրորդ տարին։ Աշխարհավեր պատերազմական բաղխումների հետեվանքով առաջ յեկած սով, տարափոխիկ հիվանդությունները, վոր տարիներ շարունակ տասնյակ յեվ հարյուր հազարավոր զոհեր կորզեցին փոքրաթիվ հայ ժողովրդից, այժմ դարձել են անցնելու սեփականություն։ Հետզհետե կազդուրվելով յեվ վոտքի տակ ամուր հող զգալով, զորեղնված իր հարեվան ազգերի բարի դրացիական համերաշխությամբ, հայ աշխատավորությունը իր Կառավարության հետ ձեռք-ձեռքի տված գերմարդկային ճիգեր ե գործադրում վերաշինելու յեվ շենացնելու իր հայրենիքը։ Սակայն մոտիկ անցյալի աղետների, պատերազմական տակալի ցնցումների յեվ ամեն տեսակ զրկանքների հետեվանքով յերկրի աշխատավորության տնտեսությունը ծայր աստիճան քայքայված վիճակի մեջ լինելով, ժողովրդական զանգվածները դժվարությամբ են կազդուրվում յեվ ահա այստեղ ե վոր աշխարհի բոլոր կողմերը ցրված հայությունը պետք ե շտապի օգնության գա իր հարազատ յեղբորը - Հայաստանի ժողովրդին։

Հրնթացս վերջին յերկու-յերեք տարիների հայ աշխատավորության յեվ Խորհրդային Հայաստանի Կառավարության ջանքերով, ինչպես յեվ Խորհրդային Ռուսաստանի յեղբայրական օգնության շնորհիվ շատ բան ե արվել։ Յերկրում վարոգվել են անջրդի-արգավանդ հողեր, խոշոր չափով զարկ ե տրվել գյուղա-

տնտեսական թանգարժեք կուլտուրաների յեվ հացաբույսերի ինտենսիվ զարգացմանը վերաշինվել յեվ բարեկարգվել են քաղաքներ ու գյուղեր, առանձին ուշադրության առարկա յե դարձել գաղթականներին խնամելու գործը, հսկայական գործ ե կատարվել ժողովրդի կրթական, ինչպես յեվ առողջապահական - սանիտարական ասպարիզում։

Տասնյակ հազարավոր վորբ մանուկներ սնուցանելու յեվ դաստիարակելու գործում խոշոր դրամական միջոցներ են սպառել թե Խորհուրդային Կառավարությունը յեվ թե ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեն։

Ցերկրի տնտեսական դրության բարելավման, կուլտուրական կյանքի զարգացման յեվ քաղաքական կացության ամրապնդման գործում խոշոր ազդակ ե հանդիսացել Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիան, վորի մի հավասարազոր անդամն ե՝ Խորհրդային Հայաստանը։

Կազդուրվում յեվ վոտքի ե կանգնում Հայաստանի աշխատավոր ժողովուրդը, սակայն յերկրի ծայր աստիճան չքավորությունը յեվ միջոցների բացակայությունը արգելք ե հանդիսանում ոգտագործելու յերկրի բնական հարստությունները յեվ զարկ տալու արդյունաբերական գործարանային կյանքին։

Հայաստանի Ոգնության Գ. համագումարը մի նոր բնություն ե Հայաստանից դուրս գտնվող Հայության ինքնագիտակցության նկատմամբ հայրենիքի հանդեպ։ Հասել ե պատմական րոպեն, յերբ գաղութային Հայությունը պետք ե վորդեգրե մի գերագույն նպատակ։ Մեր հայրենիքի վերաշինության յեվ վերածնության գաղափարը գերազանցորեն այն նվիրական նպատակն ե, վորի հանդեպ պիտի լուեն ամեն տեսակ կողմնակի հաշիվներ յեվ նկատառումներ։

Ցեվ ահա՛, այս գիտակցությամբ ե, վոր Հայաստանի Ոգնության Կենտրոնական Կոմիտեն սույն կոչով դիմելով հայրենիքից դուրս գտնվող Հայության, ջերմորեն հրավիրում ե Գ. Համագումարին, մասնակցելու այն աշխատանքներին, վորոնք մեր հայրենիքը տանում են դեպի տնտեսական - քաղաքակրթական վերածնություն։

Հայաստանի Ոգնության Կենտրոնական
Կոմիտեյի Նախագահությունն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ **Արամայիս Ցերգինյան,**
Փոխ - Նախագահ՝ **Սամսոն Հարությունյան,**
Անդամ - Քարտուղար՝ **Կոստանդին Դյուլգազարյան։**

Անդամներ՝ **Խորեն Արք - յեպիսկոպոս Մուրադբեկյան, Սարգիս Կասյան, Ցերվանդ Թադյանոսյան, Ալեքսանդր Պապոյան, Գրիգոր Վարդանյան, Դրասամատ Տեր - Սիմոնյան։**

Փոխ անդամներ՝ **Դանիել Շահվերդյան, Հովհաննես Մելիքյան, Յոլակ Խանզադյան։**

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Անդամներ՝ **Սեփուհ Կանայան, Թադեվոս Ավդալբեգյան, Գեղամ Անտելեպյան։**

Փոխանդամներ՝ **Սարգիս Վարդանյան, Միքայել Մանվելյան։**

Կոմիտեյի հասցեն՝

Հայաստան, Ցերեվան — Հայաստանի Ոգնության Կոմիտե

Армения, Эривань — Комитет Помощи Армении.

Arménie, Comité Secours d'Arménie.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՀՐԱՏԻ ԳՐՔԵՐԸ

Պոլսո մեջ լույս են տեսել Հ. Ս. Խ. Պետհրատի հետեվյալ հրատարակությունները՝

1. **Սահմանադրություն** *Ս.Ս.Ֆ.Խ. Հանրապետության, եջ 22* գինը՝ 25 ղրշ.
2. *Նույնը՝ տաճկերեն* . . . . » — »
3. **Ջրասույզ զանգը** — *Գ. Հաուպտմանի՝ թարգմանությամբ յեվ ներածությամբ Պ. Մակինցյանի, եջ 180* . . . . » 150 »
4. **Սալոմե,** *Օսկար Ուայլդի, թրգ. Վ. Տերյանի* . . . . » 50
5. *Վահան Տերյան* — **Յերկերի ժողովածու,** *Հատոր* **II.** » 100 »
6. *Վահան Տերյան* — **Յերկերի ժողովածու,** *Հատոր* **III.** » 300 »
7. *Հայաստանի Օգնության Կոմիտեյի* **III** *համագումարը* —

Մամուլի տակ են յեվ շուտով լույս կտեսնեն՝

1. *Վահան Տերյան* — **Յերկերի ժողովածու,** *Հատոր* **I.**, *խմբագրությամբ Պ. Մակինցյանի.*
2. *Յեղիշե Չարենց* — **Պոեմներ** *ներածությամբ Պ. Մակինցեանի.*

Ստացված են պետական հրատարակչության հետեվյալ հրատարակությունները՝ հին յեվ նոր ուղղագրությամբ՝

1. **Գրական Գոհարներ,** *Հատոր Ա. Եպոս, Քնարերգություն Դրամա, Թիֆլիզ 1922, եջ 728* . . . . гինը 7 ռուբլի
2. *Դ. Անանուն՝* **Ռուսահայերի հասարակական զարգացումը,** *Հատոր Բ. եջ 246* . . . . » 3 »
3. *Աշոտ Հովհաննիսյան՝* **Ռուսական օրիենտացիայի խնդիրը** . . . . » 1 »
4. **Պատմություն Տարոնոյ Բագրատունւոյ,** *եջ 96* . . . » 2 »
5. **Աբրահամու Խոստովանողի վկայք Արեվելից,** *եջ 346* » 3 »
6. *Ռ. Գաբրիելյան՝* **Բնագիտական քարտեզներ** . . . . » 50 ղրշ.
7. *Նիկոնով՝* **Բույսերի կյանքը** . . . . » 25 »
8. *Սուրխաթյան՝* **Հին Հունական Գրականություն** *դասական շրջան* . . . . գինը 1 ռուբլի
9. *Կ. Մարքս յեվ Ֆր. Էնգելս* **Կոմունիստական Մանիֆեստ,** *թարգ. Պ. Մակինցյանի, եջ 52* . . . . » 1 »
10. **Նորք,** *թիվ I յեվ II, գրական, գիտական յեվ քաղաքական հանդես, յուրաքանչյուր համարի* . . . . » 3 »
11. **Նոր Աշխարհ,** *թիվ 1—3, հասարակական - քաղաքական, տնտեսական յեվ գիտական ամսագիր, յուրաքանչյուր համարի* » 1 »
12. **Պաս - Կոմ,** *Պատանեկան պատկերազարդ ամսագիր, № 1* » 75 ղրշ.
13. *Հայաստանի Սոցիալիստական Խ. Հանրապետության Բանվորների, Գյուղացիների յեվ Կարմիր Բանակայինների Պատգամ. Խորհուրդների Ա. Համագումարի* **արձանագրությունը** . . . . » 1 ռուբլի
14. **Ն. Ռադեկ** — *Վ. Ի. Լենին* . . . . » 10 ղրշ.
15. *Հ. Մանանդյան՝* **Հայաստանի պատմությունը Թուրք-Թաթարական արշավանքի շրջանում.** . . . . » 8 ռուբլի
16. *Հ. Նավակատիկյան՝* **Հանրահաշիվ** . . . . » 5 »
17. *Վ. Մրոչեկ՝* **Ուղղագիծ յեռանկյունաչափություն** » 650 ղրշ.
18. *Հ. Նավակատիկյան՝* **Դետերմինանտներ** . . . . » 125 »
19. *Ա. Հակոբյան՝* **Ֆիզիկա** . . . . » 8 ռուբլի
20. *Ա. Տերտերյան* **Հայոց նոր գրականություն** . . » 125 ղրշ.
21. *Ա. Գրոսգեյմ՝* **Բույսերի կարգաբանություն** . . » 350 »
22. *Դր. Վ. Արծրունի՝* **Մարդակազմություն** . . . . » 450 »
23. *Հ. Նավակատիկյան՝* **Վերլուծական յերկրաչափություն** » 6 »
24. *Գ. Եղիյան՝* **Աշխատանքի Դպրոց** . . . . . . » 1 ռուբլի
25. *Վ. Կեմպբել՝* **Զննական յերկրաչափություն** . . . » 2 »
26. *Ռ. Մելիքյան՝* **Դպրոցական յերգեր** . . . . . » 2 »

Գրավաճառներին 25 տոկոս զեղչ:

Ջրի կամ ապառիկ վոչ վոքի գիրք չի ուղարկվում:

Դիմել՝ Ղալաթիա, Բալացցը Քարաքեոյ Գ. յարկ Պ. Գ. ՅԵԴԻԳԱՐՅԱՆԻՆ:

Հեռաձայն՝ Բերա 3253

«Ազգային գրադարան»
NL0218888

42. 907